№ 129 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 16 — 1901 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 16 № 129

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգային օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանանց իրաւունքների ընդարձակում.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց թատրոն. Նամակ Երեւանից. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.——ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կովկասեան հանքային ջրերը.

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

—

Կանայք մի նոր իրաւունք ձեռք բերին Նորվեգիայում: Նրանք այսուհետև պէտք է վայելեն իրաւունք ընտրելու պատգամաւորներ Նորվեգիական պարլամէնտի, ստորտինգի համար և այդպիսով պէտք է կարողանան ազդել ազգային Ժողովում և պաշտպանել թէ իրանց պահանջները և թէ ազգային ընդհանուր շահերը իրանց տեսակէտից: Ամբողջ տասնվեց տարի շարունակ կանայք կռւում էին իրանց իրաւունքների համար և միայն այսօր նրանք կարողացան յաղթութիւն տանել: Զորս անգամ քուէարկութեան ենթարկվեց կանանց ընտրողական իրաւունքներ տալու հարցը և ամեն անգամ զգալի կերպով աւելանում էր այդ առաջարկի կուսակիցների թիւը. 1890 թուին 44 կուսակից պատգամաւորների դէմ ձայն տուին 70 հակառակորդներ, իսկ այժմ նոյն առաջարկն անցաւ կուսակիցների ստուար մեծամասնութեամբ:

Կանանց ընտրողական իրաւունքների խնդիրը հերթական է դառնում նաև Եւրոպական միւս երկիրներում: Կանայք, ստանալով այդպիսի իրաւունք, սկսում են մասնակցել, տղամարդու հետ հաւասարապէս, մայր երկրի հասարակական և պետական գործերին: Այդպիսով ընտանիքը իր ամբողջութեամբ կարողութիւն է ձեռք բերում ազդելու իր երկրի հարցերի այս և այն ձևի լուծման վրա: Մի քանի Եւրոպական գաղթավայրերում կանանց աջողվեց աւելի շուտ իրագործել կանանց իրաւունքների ընդարձակումը, քան Եւրոպայում, ուր դեռ ուժեղ են հին նախապաշարմունքները: Օրինակ, Աւստրալիայի հինգ նահանգներում կանայք վայելում են կատարեալ ընտրողական իրաւունքներ թէ քաղաքացիական և թէ քաղաքական ապարէզներում, իսկ երկու նահանգում նոյն իսկ իրաւունք ունեն ընտրվելու պարլամենտի անդամ:

Ամերիկայում, Եւրոպայում, Աւստրալիայում եղած փորձերը ցոյց են տալիս, որ կանանց իրաւունքների ընդարձակումը ոչ միայն չէ ունեցել աննպաստ ազդեցութիւն, այլ և տուել է բաւարար հետեւանքներ: Կանայք իրանց մասնակցութեամբ մեծապէս նպաստում են, որ կանոնաւոր հիմքերի վրա դրվի կրթութիւնը և արհեստների ուսումնասիրութիւնը: Կանայք համակրութեամբ են վերաբերվում այն ծրագիրներին, որոնք նպատակ ունեն կռւել ալքոհալականութեան, արբեցութեան, թղթախաղի և ուրիշ ախտերի տարածման դէմ:

Կանանց իրաւունքների ընդարձակումը կը դրաւի դէպի հասարակական գործերը բազմաթիւ նոր աշխատողներ, որոնք մի և նոյն ժամանակը ներկայանում են իբրև մատաղ և աճող սերնդի մայրեր: Ազատ և քաղաքացիական իդէալներով տոգորված մայրը կը տայ իր զաւակներին քաղաքացի լինելու համապատասխան դաստիարակութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՑ ԹԱՏՐՈՆ

—

Յունիսի 14-ին, Արքունական թատրոնը լիքն էր հասարակութեամբ, մեծ մասամբ հայերով, որոնք եկել էին, հետաքրքրվելով օր. Թ. Սունդուկեանցի դէբիւտով:

Օր. Թ. Սունդուկեանցը իր առաջին ներկայացման համար ընտրել էր Գնեդիչի «Ժենեա» էտիւդը, որ, կարծեմ, գրված է եղել յատկապէս Սավինայի համար: Այդպիսի պիէսները միշտ յարմարեցրած են լինում որոշ դերասանի կամ դերասանուհու տաղանդի, երբեմն նոյն իսկ կազմուածքի առանձնայատկութիւններին եւ առհասարակ զուրկ են լինում լուրջ արժանաւորութիւններից: Այդ տեսակէտից, պիէսի ընտրութիւնը չէր կարելի անաջող չը համարել, բայց դուրս եկաւ, որ ոչ միայն յատկապէս այդ դերը, այլ եւ առհասարակ այդպիսի դերերը չեն համապատասխանում օրիորդի ընդունակութիւններին: Օրիորդը չունի այդպիսի դերերի համար անհրաժեշտ թեթեւութիւնը, խաղունութիւնը, չարաճճիութիւնը: Սակայն, չը նայելով դրան, օրիորդը ունեցաւ մեծ աջողութիւն իր մտածված խաղով, արտայայտիչ արտասանութեամբ, շնորհալի միմիկայով եւ պլաստիք շարժումներով: Հասարակութիւնը գնահատեց այդ արժանաւորութիւնները օրիորդի խաղում եւ վարձատրեց նրան բուռն ծափահարութիւններով եւ ծաղկեայ փունջով: Մենք եւս ողջունում ենք օրիորդի բեմական գործունէութեան սկզբնաւորութիւնը եւ համոզված ենք, որ դեռ շատ եւ շատ ծափահարութիւններ եւ փունջեր են վիճակված շնորհալի օրիորդին, միայն թէ նա գտնի իր ամպլուան, հետեւելով ոչ թէ ուրիշների ցուցմունքներին, այլ իր ներքին կոչմանը: Մենք առիթ ենք ունեցել տեսնել օրիորդին մի քանի տարի առաջ սիրողների ներկայացման մէջ, դրամատիկական դերում, եւ կարծում ենք, որ վատ չի լինի, եթէ օրիորդը այդպիսի դերերում փորձի իր ուժերը: Նա լաւ դպրոց է անցել այժմ, Աստուածային կայծ կայ մէջը, մնում է, որ մի խոր զգացմունք բոցավառէ այդ կայծը: Մայրենի բեմից կարելի է սպասել այդպիսի ներշնչում, եւ մենք հաւատացած ենք, որ օր. Սունդուկեանց կարող է դառնալ հայ բեմի զարդը, եթէ նուիրվի նրան:

«Ժենեայից» առաջ այդ օրը ներկայացրին Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի «Կեանքի արժէքը» դրաման: Այդ դրաման, որի բովանդակութիւնը յայտնի է հայ հասարակութեան, որովհետեւ թարգմանված է հայերէն եւ ներկայացվում է նաեւ մեր բեմում, առաջնակարգ թատերական գրուածք չը լինելով, այնու ամենայնիւ, նայվում է մեծ հետաքրքրութեամբ: Նրա մէջ շատ պակասութիւններ կան,—Բիբենիցինայի եւ Սօլոնչակովի յարաբերութիւնները տարօրինակ են եւ անհասկանալի, Բիբենիցինայի տիպը դժգոյն է եւ վարմունքները հոգեբանօրէն պատճառաբանված չեն, Նիկոլայը եւ Վարեան խրտուիլակներ են եւ ոչ թէ կենդանի անձնաւորութիւններ, բայց, դրա փոխարէն, հեղինակը կարողացել է վառ գոյներով եւ գեղարուեստական ճշդութեամբ վերարտադրել մի իրական դրամա, որ կատարվում է Աննա Վիկտորովնա Դեմուրինայի «առանց դաւանանքի» հոգու մէջ: Եաբլօչկինա (Աննա Դեմուրինա), որի խաղը սկզբում դժգոյն էր,—ինչպէս եւ իր դերը պիէսայի սկզբում,—հետզհետէ մըտաւ դերի մէջ եւ երրորդ գործողութեան մէջ, նամակի ընթերցման ժամանակ, իր մանրակրկիտ մտածված, խորապէս զգացված եւ վերին աստիճանի գեղարուեստական խաղով թողեց ու ցնցեց հանդիսականներին, որոնք վարձատրեցին նրան երկարատեւ ու բուռն ծափահարութիւններով եւ մի չքեղ ծաղկեայ փունջով: Եաբլօչկինայի արժանաւոր խաղակիցն էր Պաղարին Դանիլո Դեմուրինի դերում: Շատ աջող էին Իլինսկիյ՝ Ալէքսանդր Մօրսկոյի եւ Պրավդին՝ փիլիսոփայ Սօլօնչակովի դերերում: Վասիլիեվ (Գերման Դեմուրին) իր դերում չէր: Իրանց տեղում չէին եւ մնացած դերակատարները: Եւ սակայն հասարակութիւնը շատ գոհ մնաց ներկայացումից չնորհիւ Եաբլօչկինայի խաղին: Այդպիսի խաղեր նկատի ունէր Բելինսկի, երբ բացականչում էր. «Գնացէք թատրոն, ապրեցէք թատրոնում եւ, եթէ կարելի է, մեռէք թատրոնում»:

Տ. Ց.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 5-ին

Այժմ, երբ տ. Սիրանոյշ իր խմբով բաւական հետաքրքրութիւն է առաջ բերել մեր հասարակութեան մէջ, երբ իւրաքանչիւրը մեզանից բուռն ցանկութիւն ունի մայրենի լեզուով ներկայացումներ տեսնել, իսկ միւս կողմից այժմեան բեմի փոքրութիւնը եւ տեղերի անմատչելիութիւնը արգելք են լինում այդ ցանկութեան, աւելի քան երբ եւ իցէ զգալի է դառնում գոնէ մի հաւեստ բեմի անհրաժեշտութիւնը:

Մի 10—15 տարի առաջ, երբ բեմի կրթիչ նշանակութիւնը դեռ եւս քիչ չափով էր ընդհանրացած մեր հասարակութեան մէջ, այն ժամանակվայ Գայիանեան դպրոցի փոքրիկ բեմը բաւականութիւն տալիս էր տարվայ մէջ մի քանի սիրողների կազմած ներկայացումների համար: Այժմ մեզ ժամ գալիս են դերասանական խմբեր, երգիչներ եւ նուագածուներ, տարվայ բոլոր եղանակներում համարեա տեղի են ունենում ներկայացումներ, թէեւ ոչ շատ հաստատուն, բայց գոնէ ամառուան ամիսներին, երբ Գայիանեան դպրոցի դահլիճը դատարկ է, ինչպէս նաեւ ամառանոցներում, ինչպէս Ալաւերդի, Ջաջուռ, Սեւան, Գոգչայ, Ղազանչի, Ղարաբաղլար, Ղարաքիլիսա, Ղարաքուրան, Ղարաղալա, Ղարաղամբարաշ, Ղարաղանլուգ, Ղարաղաշ, Ղարաղուշ, Ղարաղուլաղ, Ղարաղուրան, Ղարաղուրշաղ, Ղարաղուրտ, Ղարաղուրտլար, Ղարաղուրտլու, Ղարաղուրտլուքիլիսա, Ղարաղուրտլուքիլիսանի, Ղարաղուրտլուքիլիսանիլար, Ղարաղուրտլուքիլիսանիլարի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիի, Ղարաղուրտլուքիլիսանիլարիիիիիիիիիիիիիիիիիիի

բունակ, եւ մեզանում հասարակական կեանքը սկսել է արդէն առաջ շարժվել, բայց չը նայած այդ բոլորին, Երեւանի պէս մի նահանգական քաղաքը մինչեւ այսօր չունի գոնէ մի ընդարձակ դահլիճ, որը յարմարեցրած լինէր բեմի։

Գայիանեան դպրոցի բեմը չը կայ. նրա փոխարէն ունենք քաղաքային ժողովարանի բեմը, դրան էլ Աստուած բեմ համարէ։ Այն դահլիճը, որ ծառայում է պարերեկոյթների համար, մի գիշերվայ մէջ փոխվում է բեմի. դահլիճի մի մասում դնում են ոտից գլուխ չարժական բեմը. գերաններ, տախտակներ, չթերով մեխած շրջանակներ, մի քանի կարտոնի ծառեր եւ մի «թթի չարավից» էլ փոքր վարագոյր, մի խօսքով մի բեմ, որը դերասանի հետ չարժվում, նրա հետ լացում է։ Բեմի առաջից դարձած են 17 կարգ աթոռներ միմեանց կպած, միմեանց սղմված, այնպէս որ անց ու դարձի տեղ չը կայ. տեղը գնալու համար պէտք է ոտի կանգնեն մի չարք մարդիկ եւ յետ առաջ քաշվեն տասնեակ աթոռներ։ Աթոռների վերջին կարգի ետեւում մնում է 1½ արշին տարածութիւն, դա էլ գալերէան է ոտի վրա կանգնողների համար, թեով 30, 40, 50, նայած թէ գալերէականները որքան առաձգական են եւ սղմվելու, միմեանց կպչելու ընդունակ են։ Այսպիսով 300-ից աւելի մարդիկ սղմվում են մի դահլիճի ⅔ մասում։

Իսկ ընդմիջումներին ժողովուրդը խառնվում է մի սենեակի մէջ։ Այնքանը յարմարութիւնների տեսակէտից. ապա նիւթականը։ Ոտի վրա սեղմվելու համար պէտք է վճարել 50 կոպէկ, վերջին կարգի աթոռներն արժեն 1 ր. 10 կ. մինչդեռ այդ 1 ր. 10 կ.-ով կարելի է Մոսկվայի կայսերական մեծ թատրոնի վերջին գալերէան, որը աւելի յարմար է քան մերի նոյն իսկ մէջտեղի աթոռները, մուտք ունենալ 4 անգամ։ Այսպէս լինելուց յետոյ հասկանալի է, որ թատրոնը մեր ժողովրդի համար կը մնայ անմատչելի, ցանկացողը հնարաւորութիւն չի ունենայ յաճախել թատրոն։

Ամեն տարի Երեւանի իւրաքանչիւր փողոցի վրա բարձրանում են մէկը միւսի ետեւից հոյակապ տներ։ «Հայը որ փող ունեցաւ կը տայ քար ու ցեխի», դա երեւանցու համար ասված առած է։ Նպատակը տանից վարձ ստանալն է, բայց մինչեւ այսօր չը գտնվեց մէկը, որ տասնեակ հազարներ ծախսելու եւ բնակարաններ կառուցանելու հետ միասին իր շինութեան գոնէ մի մասում չմնար մի հատուկ բեմ իր համեստ յարմարութիւններով, միաժամանակ երկու նպատակի հասնելով. նա կունենար որոշ չափով եկամուտ, որը կը գերակշռէր նոյն տեղի բերած տան վարձից եւ թէ նա նպատակ կը լինէր թատրոնի պէս մի կրթիչ գործի տարածման։ Թող դուրս գայ մէկը մեր հարուստներից, չմնէ մի բեմ, փոխանակ շատ սովորական դարձած տանտէր կամ խանութի տէր դառնալու եւ նա բացի որոշ գաղափարի տարածման նպատակ լինելուց, պնդում ենք, կունենայ վաստակ։ Երբ բեմ եղաւ, տարէնը 100 ներկայացումից աւելի կը լինի։

Արդեօք չի՞ լինի այդպիսի մէկը։

Ա—Դ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յունիսի 10-ին

Ամսիս 5-ին պ. Խանդամիրեանի թատրոնական դահլիճում հայկական խմբեր կազմակերպող պ. Կարա-Մուրզան տուեց իր առաջին կօնցերտը, որն անցաւ շատ աջող։ Ընդամենը մի քանի օրվայ մէջ 70 հոգուց կազմած խումբը արդարացրեց բազմամարդ եւ բազմատեսակ երկսեռ հասարակութեան ակնկալութիւնները, մանաւանդ՝ ժրաջան ուսուցչապետի աշխատանքը, որ ստացաւ բուռն ծափահարութիւններ. հասարակութիւնը սրտատրոփ սպասում է երկրորդ եւ գուցէ վերջին կօնցերտին, որ տեղի կունենայ մի շաբաթից յետոյ։

Ամսիս 7-ին, հինգշաբթի երեկոյեան, քաղաքի մէջ կայծակի արագութեամբ տարածվեց մի տխուր լուր, իբր թէ «Ումբրի-բէգի» բաղի մօտ սրընթաց հեղեղը քշել-տարել է նոյն երեկոյ սպասվող պօստակառքը եւ որ այդ հեղեղին զոհ է գնացել իր անզգուշութեամբ պօստավար պաշտօնեան։ Տարաբախտաբար, լուրը ճշդվեց եւ հետեւեալ օրը պօստի փոխարէն քաղաք եկաւ թշուառ զոհի դիակը եւ նաժակ ու լրագիրների փոխարէն ստացանք ջրի ու տիղմի մէջ տրորված թղթէ զանգուածներ։ Շատերը փորձեցին արեգակի տակ չորացնել եւ կարդալ մի բան, բայց անաջող. մեզ վիճակված էր 2—3 օր առանց լրագիրների տխուր նստել եւ մենք այդպէս էլ արեցինք, մինչեւ ստացվեց վերջապէս հետեւեալ պօստը։

Այսօր, կիրակի, առաւօտեան ժամը 11½—12-ին, տեղի ունեցաւ թեմական դպրանոցում տարեկան ակտ, որը վերջացաւ մի ամօթալի, դատապարտելի սկանդալով...

Դպրոցական դահլիճը, զարդարված ծաղիկներով եւ տերեւազարդ ոստերով, լի էր ամեն դասակարգի երկու սեռի հասարակութեամբ։ Մի հատ աթոռ դնելու, մի հատ մարդ—թէկուզ շատ փոքրիկ ոտներ ունեցող մարդ—կանգնելու այլ եւս տեղ չը կար։

Բայց մեր «պապոնց տունը հարսանիքի չնորհ բերող» տիկինները եւ օրիորդները՝ պլիւս արտաքուստ կրթված կավալերներ՝ քաղցր փորձով գիտէին, որ նրանց համար միշտ տեղ կարող է ճարել դպրոցական վարչութիւնը, մինչեւ անգամ հանդէսը վերջանալու մօտ, ստուար բազմականների ուսերի, եթէ չասեմ գլուխների վրա։

Վերջապէս բաժանեցին, այսինքն ում ուզեցին տուեցին, հանդէսի ծրագիրը, որ բաղկացած էր 11 կատարներից։ Սրանց մէջ ամենագլխաւոր տեղը բռնում էր տեսչի հաշուետուութիւնը եւ ամենաաւելորդ տեղը ինչ որ մի կրթական ճառ։

Հանդէսը սկսվեց «Հայրենեաց սիրով» երգով, որից յետոյ բեմ ելաւ տեսուչ Բենիկ վարդապետը եւ կարդաց ուսումնական հաշիւը։

Այդ հաշիւը, որին մենք կը դառնանք մեր «Ազատ ժամերում», բովանդակում էր, ի միջի այլոց, բողոք եւ անտակտ յարձակումն հայ մամուլի թղթակից—աշխատակիցների դէմ։ Այդ հաշիւը մի աւելորդ անգամ եւս հաստատեց մեր համոզմունքը այն բանի մէջ, որ մեր դժբաղդ օրերում չողոքորթութիւնը աւելի բարձր գին ունի, քան անաչառ ճշմարտախօսութիւնը։

Հաշուին յաջորդեց չարաբաստիկ կրթական ճառը, որը կարելի չեղաւ շարունակել՝ սկսված աղմուկի պատճառով։

Վերջում ոտքի կանգնեց թեմական առաջնորդը եւ համառօտ խօսքով արտայայտեց իր դժգոհութիւնը։

Դժգոհ մնացին գրեթէ ամենքը։

Սերմայան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 13-ին

Թատրոնական մասնախումբը խնդրում է, թիւրիմացութիւններին տեղիք չը տալու համար, թոյլ տալ, «Մշակի» 125-րդ համարում ամբարային ժողովարանի ներկայացման մասին եղած լուրի առիթով յայտնել յարգելի հասարակութեան, որ հրաւիրված խումբը կազմված է Թիֆլիսում գտնվող բոլոր դերասաններից, բացի երեքից, որոնց մշտապէս խմբում չը լինելը ունի իր որոշ պատճառները։ Կիրակի օրը խաղացողներից, բացի օր. Գուլազեանից, որ աջող խաղաց իր դերը, բոլորն էլ դերասաններ էին։ Մասնախմբի անդամները՝ պ. պ. Սիւտճեան, Աւագեան, Երիցեան, Ռափայէլեան եւ Տէր-Մարգարեանց, ոչ թէ «Աւճալեան թատրոնի սիրողներ» են, այլ վերջին երեքը ժողովրդական թատրոնի հայկական բաժնի (սեկցիայի) ղեկավարող անդամներից են։

Մասն. կողմից Խ. Տէր-Մարգարեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունիսի 9-ին, շաբաթ օր, Մոսկվա-Կազանեան երկաթուղու արագ գնացքով, ինչպէս հաղորդում է «Русск. Вѣд.» լրագիրը, Թիֆլիսից Մոսկվա հասաւ Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գոլիցին եւ նոյն օրը երեկոյեան Նիկոլաեվսկայա երկաթուղիով ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

—

Երէկ, ճաշից յետոյ, Ախալքալաքից, մեր թղթակից Սալլիմեանից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Այս րոպէին վերադարձանք Վաչիանից։ Երէկ այդ գիւղը ենթարկվեց մի նոր եւ սարսափելի թշուառութեան. հեղեղը մօտ երեսուն տներ աւերեց. շատ տներ կիսաքանդ են, մարդկային զոհեր երկու են. կոտորվել են շատ անասուններ։ Վնասները ահագին են։ Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն»։

—

Եկող ուսումնական տարվանից Մոսկվայի Լազարեան ճեմարանի մասնագիտական դպրոցներում մահմեդական օրէնսգիտութեան առանձին դասընթացք է հաստատվում։

Թիֆլիսի բէալական դպրոցում քննութիւններն արդէն վերջացան։ Այս տարի բէալական դպրոցի 7-դ լրացուցիչ դասարանն աւարտեցին 35 աշակերտներ, որոնցից 16 ռուսներ են, 10 հայեր, 3 լեհացի, 3 հրէայ, 2 գերմանացի եւ 1 վրացի։ Ուսման ընթացքն աւարտողներից Պօղոս Իւզբաշեան, դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ, ներկայացված է կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ կովկասեան ստիպենդիա տալու համար։ Դրամական նպաստներ են տրված երեք աշակերտներին բարձրագոյն դպրոցները գնալու համար։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգի համալսարանի ուսանողների եւ գեղարուեստական ակադէմիայի ունկնդիրների մի խումբ գնում է Պօմորիէ, իսկ յետոյ Հիւսիսային երկիրը՝ հաւաքելու համար ժողովրդական սովորութիւնները, ուսումնասիրելու համար տեղական բոյսերը ու կենդանիները եւ նկարելու համար տեղական հնութիւնների մնացորդները։

—

Մտադրութիւն կայ սեպտեմբերին Պետերբուրգում բանալ բարձրագոյն առեւտրական կուրսեր՝ հաշուապահութեան ուսուցիչներ եւ զանազան ճիւղերի առեւտրական գործիչներ պատրաստելու համար։ Կուրսերում աւանդվելու են՝ օրէնսգիտութիւն, առեւտրական իրաւունք, մուրհակային իրաւունք, քաղաքական տնտեսութիւն, առեւտրական աշխարհագրութիւն, վիճակագրութիւն եւ հաշուապահութիւն զանազան ճիւղերին վերաբերեալ։ Դասընթացքը տեւելու է երկու տարի։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Գ. Լ.-ի կիրակնօրեայ զրոյցը «Մշակի» 118-րդ համարում նուիրված էր Յովհաննէս Լազարեանի յիշատակին։ Գ. Լ. այն միտքն է յայտնում, որ Լազարեան ճեմարանի վարչութեան պարտականութիւնն է Լազարեան տոհմի պատմութիւնը տալ հայ ժողովրդին։ Պարտք եմ համարում «Մշակի» ընթերցողներին յայտնել, որ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը, անցեալ տարվայ վերջերում, եկեղեցական գումարներից նշանակեց 3000 ռուբլի Յովհաննէս Լազարեանի մահվան հարիւրամեակի առիթով ժողովրդի համար նրա կարճառօտ կենսագրութիւն հրատարակելու համար։ Այս գործը պ. Կոստանեանին յանձնվեց։ Գարունը, մի ամիս Մոսկվայում պարապելուց յետոյ, հրաժարվեց, հիւանդութեան պատճառով։ Ոչինչ օգուտ չը բերելով գործին՝ 300 ռուբլի ստացաւ։ Այժմ մասնաւոր կերպով այս գործը յանձնված է Մեսրոպ վարդապետ Մովսէսեանին։ Բայց դա կարճառօտ կենսագրութիւն չէ լինելու, այլ՝ ամբողջ Լազարեանների տոհմի պատմութիւնը։ Բացի այս բոլորից, եկեղեցական խորհուրդը Յովհաննէս Լազարեանի հարիւրամեայ մահվան տարեդարձի առիթով, 8000 ր. տարեկան գումար նշանակեց Լազարեան ճեմարանում 20 գիշերօթիկ տանիկներ պահելու։ Տանիկներ

սիֆիլիսներից (առհասարակ վեներական ախտ ունեցողներից ու քամոններից (ռեվմատիզմ)։ Այս հիւանդների թիւը Պեատիգորսկում շատ մեծ է, շատ է եւ մասնագէտ բժիշկների թիւը։

Կանոնաւոր բժշկութիւնը, ազատ ապրուստը, ջրերը, ճշմարիտ որ, երբեմն կարճ միջոցում հրաշքներ են անում։ Հազուագիւտ չեն այնպիսի դէպքեր, երբ անդամալոյծները (սիֆիլիսից կամ քամուց) ոտի են կանգնում։

Պեատիգորսկում կենտրոնացած է հանքային ջրերի վարչութիւնը, բանկերը. այստեղ հրատարակվում է «Сезонный Листокъ» թերթը, որի մէջ տպվում են տեղեկութիւններ ջրերի մասին, պաշտօնական կարգադրութիւնները եւ ջրերը եկող հիւանդների անուններն ու եղած տեղը։

Ջուրը Պեատիգորսկի հրապոյրներից մէկն է. երեք չորս վերստ հեռու բարձրանում է Խցա կոչված սարը, որից բղխում են բազմաթիւ ջրաչատ աղբիւրներ։ Այս աղբիւրների յստակ հրաշալի ջրերն են, որ ջրանցքով բերված են քաղաք։ Ջտես խեղճ (?!) բագուցիները սահարեցու նման վրա են պրծնում այդ «անմահական» ջրերին ու մի առժամանակ մոռանում շամպանիան։

Էսսէնտուկի։ Տան եւ հինգ վերստ հեռաւորութեան վրա (½ ժամ երկաթուղիով) գտնվում է Էսսէնտուկի գիւղը, որտեղ գտնվում են յայտնի հանքային ջրերը։ Այս ջրերը շատ հարուստ են զանազան աղերով. նրանց գործածութիւնը կանոնաւորում է մարսողութիւնը եւ խոր փոփոխութիւններ է մտցնում ամբողջ կազմուածքի մէջ։

Էսսէնտուկ եղողները զարմանում են տեսնելով, որ այնտեղ գալիս են բժշկվելու համ չափազանց դէր մարդիկ, համ չափազանց նիհարները։ Եւ, ճշմարիտ որ, սէզոնից յետոյ չաղերը լղարում, իսկ լղարները չաղանում են (ի հարկէ երկուսն էլ չափաւորապէս)։ Էսսէնտուկի ջրերը այսպէս տարբեր կերպով են ազդում, նայելով թէ որ ջուրը եւ ինչ քանակութեամբ է գործածվում։ Շատերն էլ գալիս են ու իրանց գլխու, առանց բժշկի խորհրդի, խմում են, ու պէտք է խոստովանել, որ յաճախ չեն էլ վնասվում։ Ի՞նչ հիւանդութիւնների համար են այստեղ գալիս։

Գլխաւորապէս ստամոքս—աղիքային (մարսողութեան խանգարումները, ստամոքսի ու աղիքների յարատեւ կատար)։ Բացի այդ, Էսսէնտուկի ջրերը շատ օգնում են լերդի, երիկամունքների, միզափոխերի եւ փամփուշտի երկարատեւ հիւանդութիւնների դէմ։

Ժելեզնովոդսկ։ Պեատիգորսկից 14 վերստ գտնվում է երկաթէ սարը, որի լանջում, խիտ անտառի մէջ, սփռված են Ժելեզնովոդսկի տնակները։ Դիմացը բարձրանում է գեղեցիկ Բէշտաուն եւ շուրջը տարածվում է մի հարուստ անտառ։ Երկաթուղին Բէշտաու կայարանից զառիվեր է բարձրանում հինգ վերստ երկարութեամբ։

Միջին ջերմութիւնը հասնում է 18° ըստ Ցելսիի. ամենաշոք օրերին լինում է 37°, ուրեմն աւելի հով է, քան Պեատիգորսկում։ Կլիմայական մեղմ է, հաւասար. Ժելեզնովոդսկում շատ հազուագիւտ են տարափոխիկ հիւանդութիւններ, իսկ համաճարակներ երբէք չեն նկատվում։ 1892-ին, երբ շրջակայքում լիքը խոլերա էր, Ժելեզնովոդսկում ոչ մի դէպք չեղաւ։

Նշանաւոր են այստեղի երկաթի ջրերը, որոնք կարող են մրցել եւրոպական ամենալաւ ջրերի հետ։ Ջրերը զանազան քանակութեամբ երկաթ են պարունակում, այնպէս որ բժիշկը իր տրամադրութեան տակ ունի մի չարք տարբեր ոյժի ջրեր։ Հիւանդները գտնում են այստեղ, բացի գեղեցիկ կլիմայից, լեռնային օդից ու երկաթէ ջրերից, նաեւ մի չարք նորագոյն բուժական միջոցներ,—լոզարաններ, դուշեր, ելեքտրական եւ ուրիշ վաննաներ եւ այլն։

Այստեղ բժշկվող հիւանդները չափազանց տարբեր են լինում իրարից, բայց այս կուրորտը գլխաւորապէս սակաւարիւնների, նրաւազների, ծիւրվածների համար է։ Սրանք են, որ ամենից լաւ օգտվում են լեռնային ու անտառային օդից, երկաթէ ջրերով, կազդուրիչ ու մննդարար կումիսով եւ այլն։ Եւ քանի որ սակաւարիւնները ընդհանրապէս պատանիներ եւ առաւելապէս աղջիկներն են, այս պատճառով էլ Ժելեզնովոդսկ իրաւացի կերպով համարվում է «մանկական կուրորտ»։ Նա մի եւ նոյն ժամանակ եւ կանացի կուրորտ է, որովհետեւ այստեղ ժողովվում են մեծ քանակութեամբ կանայք, կանացի հիւանդութիւնների համար, կամ իրանց երեխաների պատճառով։

Այսպէս շատ մայրեր գալիս են Ժելեզնովոդսկ իրանց սակաւարիւն երեխաներին բժշկելու համար, շատերն էլ իրանք բժշկվելու, եւ բերում են իրանց հետ, ի հարկէ, եւ երեխաներին։ Այսպիսով Ժելեզնովոդսկում դուք հազիւ կը հանդիպէք տղամարդու։

Կիսլովոդսկ. Կիսլովոդսկը մի գեղեցիկ եւրոպական անկիւն է, որտեղ դուք կը գտնէք իսկ եւրոպական կուրորտային կեանք իր կուրզալով, իր թատրոնով, իր պարահանդէսներով, երեկոյթներով, հրաշալի սիմֆոնական խմբով, ընդարձակ պարկով, ելեքտրական լուսաւորութեամբ։ Սա իսկապէս մի այնպիսի տեղ է, ուր ուրիշ գրուպների հիւանդները գնում են հանգստանալու, Նարզանի ջրից օգտվելու ու մի քիչ իրանց ներվերը հանգստացնելու։

Կեանքը այստեղ ընդհանրապէս շքեղ է, տիկինները պճնվում են, կախում իրանց ամենամեծ գոհարները, հագնում ամենաթանգ հագուստները, որ օրական երեք անգամ փոխում են։ Սա ֆլիրտի աշխարհ է եւ բօսանտիկ տրամադրութեան մարդու տեղ է։ Թողնենք այդ։

Նարզանի ջուրը քիչ թթուաշ է ու հարուստ գազով, որով վերին աստիճան դուրալի զովացուցիչ խմելիք է։ Գազի (ածխաթթու) քանակութիւնը այնքան մեծ է, որ աղբիւրը փրփրում է ու կարծես եռում։ Այս ջուրը մի մեծ հարստութիւն է, որից սակայն դեռ եւս կառավարութիւնը չէ օգտվել ինչպէս հարկն է. այնուամենայնիւ այժմ օրական 27,000 կիսաշիշ

նշանակելու իրաւունքը Վեհափառ Կաթողիկոսին է տուած»։

—

ՍԻՄՖԷՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Տեղիս երկու ռուս լրագիրների մէջ Բերդեանսկ քաղաքի թղթակիցները մեծ գովեստներով են խօսում Մոսկվայի կայսերական բեմի դերասան պ. Ամիրջանեանի մասին, որը մասնակցում է յայտնի մաէստրո Ա. Էյխենվայլդի օպերային խմբի մէջ։ Մայիսի 30-ին խումբը ներկայացրել է «Դեւ» օպերան։ Դեւի դերը կատարել է պ. Ամիրջանեան։ Դերասանի համեստ անունը կասկածանքի մէջ է գցել ժողովրդին, աջող կը տանի՞ արդեօք նա իր դերը, դրա համար էլ թատրոնը լիքը չէ եղել։ Սակայն ներկայացումը բոլորովին հակառակն է ցոյց տուել։ Առաջին իսկ նօտաներից արտիստը հիացրել է ներկայ եղողներին եւ այնուհետեւ ամբողջ ներկայացումը պ. Ամիրջանեանի համար տրիումֆների մի շարք է եղել. հետզհետէ աւելացող աջողութիւնը վերջը էնտուզիազմ է առաջացրել։ Ժողովրդի ոգեւորութիւնը մեծ է եղել մանաւանդ «не плачь, дитя» կտորը երգած ժամանակը։ Դերասանին ծաղիկներ են ձգել. ծափահարութիւններին եւ կոչերին վերջ չէ եղել»։

—

Գանձակի նահանգի ԲԱԴԱ գիւղից մեզ գրում են. «Յունիսի 9-ին, մի քանի աւազակներ գողանում են մեր գիւղի ծխատէր Մեսրոբ քահանայ Ստեփանոսեանի երկու ձին եւ, սենեակի կողպէքը կոտրելով, ներս են թափանցում բնակարանը ու մեծ ջնաներ հասցնում։ Ասում են, քահանան տեսել է գողերին, բայց, հրացան նկատելով ձեռներին, ձայն չէ հանել, վախենալով, որ տեղնուտեղը կը սպանեն իրան։ Հրաւիրում ենք ոստիկանութեան ուշադրութիւնը այդ դէպքի վրա»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ղուբայում բացվեց եւ օծվեց հիւանդանոցը։ Ռուս հոգեւորականութիւնը մաղթանք կատարեց. բազմութիւնը մեծ էր։ Հիւանդանոցը իսկապէս բացված պէտք է համարվի այս տարվայ յունվարի 16-ից։ Մինչեւ պաշտօնական բացման օրը կատարված գործերի մասին տեղեկութիւն տուեց քաղաքային բժիշկ Ա. Ցէնտներ։ Այդ հաշուից երեւում է, որ հիւանդների թիւը հասել է 618-ի, որոնք 2060 այցելութիւններ են ունեցել հիւանդանոցի մէջ. հիւանդացողների թիւը ամսէ ամիս աւելացել է, 68-ից հասնելով 241-ի. հիւանդների 21-րդ մասը միայն գիւղացիներից էր. հիւանդների 55 տոկոսը կազմում են թուրքերը, 28 տոկոս՝ հրէաները, ռուսները 15 տոկոս եւ հայերը՝ 2 տոկոս։ Կանայք էլ են այցելել հիւանդանոցը. հիւանդների ընդհանուր թուից կին հիւանդներ, որոնք դարմանվել են հիւանդանոցում յունվարի 16-ից մինչեւ մայիսի 10-ը, եղել է 178 հոգի. այդ թուից 77 եղել են թուրք կանայք։ Հիւանդանոցում պառկած հիւանդների թիւը եղել է 28, նրանցից 16 քաղաքացիներ էին, իսկ մնացածը՝ գիւղերից։ Հիւանդանոցի գոյութիւնը պահպանվում է վեց հարիւր ռուբլի տարեկան գումարով, որը տալիս է քաղաքային վարչութիւնը. բայց այդ գումարը խիստ փոքր է. բարի մարդիկ խումբ կազմեցին, ներկայացումներ տուեցին, որոնցից զուտ արդիւնք գոյացաւ 130 ռուբլի. այդ գումարն էլ դարձեալ փոքր է, որ կարելի լինէր պահպանել հիւանդանոցի գոյութիւնը, ուր այնքան շատ են յաճախում հիւանդները։ Ներկայացումների տուած փողից գնվել պատրաստվել են դեղեր, որոնք բաժանվել են 259 մարդու։ Օծման եւ բացման օրը հեռագիրներ ուղարկվեցին Թիֆլիս՝ Բագուի նահանգապետին, Զաքաթալա՝ Ղուբայի նախկին գաւառապետ Եպիսկոպոսին եւ Բագու՝ նահանգական բժշկին, որոնք այդ բարի գործը գլուխ բերին։ Հարկաւոր է նկատել, որ նոյն իսկ բժիշկ Ցէնտներն էլ տարիների ընթացքում ջանքեր գործ դրեց հիւանդանոցի գործը առաջ տանելու եւ հասաւ իր նպատակին։ Հիւանդանոցում ձրիաբար բժշկում են Ղուբայի բոլոր բժիշկները եւ կին-բժիշկները, մանկաբարձուհիները։ Հիւանդանոցի նշանակութիւնը որքան մեծ եւ անհրաժեշտ է, դա հասկանալի է ամենքի համար, մանաւանդ նրա գոյութիւնը կարեւոր է այսպիսի խուլ տեղում, ուր գիւղացի աղքատ հիւանդներ կարօտ են բժշկի օգնութեան։ Ցանկանք, որ բարի մարդիկ դրամով նպաստեն, քանի որ իսկապէս սուղ են հիւանդանոցի միջոցները. ընակարանը հարկաւոր է փոխել եւ լաւը վարձել, քանի որ եղածը անյարմար է։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Frankfurter Zeitung» լրագրի թղթակիցը գրում է Կ. Պօլսից. «Վերին Ալբանիայի, մանաւանդ Նօվի-Բազարի գործերի դրութիւնը ամբողջ դիպլոմատիական մարմնի ուշադրութիւնն է գրաւել։ Նօվի-Բազարի քրիստոնեայ սերբ ազգաբնակութիւնը ենթարկված է դաժան հալածանքների ալբանցիների կողմից եւ մեծ խմբերով փախչում է սերբիական սահմանները։ Թիւրքական իշխանութիւնները եւ դատարանները միանգամայն անկարող են երեւում։ Նօվի-Բազարում չուկան փակված է մի քանի շաբաթներից ի վեր. տեղական սերբիական դպրոցները նոյնպէս փակված են։ Ալբանցիները ամեն օր կատարում են սպանութիւններ եւ կողոպուտներ, որոնք բոլորովին անպատիժ են մնում։ Ռուսաց դեսպան Զինովիեվ սուլթանի ուշադրութիւնը հրաւիրեց գործերի այս լուրջ դրութեան վրա։ Սուլթանը յայտնեց, թէ գեներալ Հաժդի-փաշային ուղարկված են չորս անատոլիական բատալիոններ կարգը վերականգնելու համար եւ, եթէ հարկաւոր լինի, նա կարող է ձեռքի տակ ունենալ եւ աւելի մեծ քանակութեամբ զօրքեր։ Պէտք է սպասել, որ միւս դեսպաններն էլ Բ. Դրան ուշադրութիւնը կը հրաւիրեն այն վտանգի վրա, որ սպառնում են այսպիսի անկարգութիւնները, եթէ չարունակվեն։ Սերբիական դեսպան Գրուիչ, ստանալով իր կառավարութիւնից մանրամասն հաղորդագրութիւններ այն մասին, թէ ինչ է կատարվում Ալբանիայում, վճռեց շատ եռանդոտ առաջադրութիւններ անել Բ. Դրան։ Եթէ այդ առաջադրութիւններն էլ պատշաճաւոր ներգործութիւն չունենան, այն ժամանակ Բելգրադի կառավարութիւնը դանդատ կը ներկայացնէ մեծ պետութիւններին։

—Լօնդօնում կայացաւ խաղաղութեան բարեկամների մի շատ մեծ միտինգ։ Նախագահի բազկաթոռի վրա նստեց Լաբուշէր, որին երկար ծափահարութիւններով ընդունեցին։ Դիմելով ժողովին, Լաբուշէր ասաց, թէ ճշմարիտ «դաւաճանները» խաղաղութեան բարեկամները չեն, այլ այժմեան մինիստրները, որոնք ցեխոտեցին Անգլիայի բարի անունը։ Նրանից յետոյ խօսեց Կապի նախկին մինիստր Զաուէր, որ ապացուցեց, թէ պատերազմը բօէրները չառաջացրին, այլ լորդ Սալսբիւրիի կառավարութիւնը, որ սկսեց պատրաստվել պատերազմի՝ Զէմսօնի արշաւանքի ժամանակից։ Բօէրները միայն մի բան էին ուզում—խաղաղութիւն. այժմ նրանք մինչեւ վերջը պիտի կռուեն իրանց անկախութեան համար, ուշադրութիւն չը դարձնելով ոյժերի անհաւասարութեան վրա։ Ատենաբանի այս խօսքերը բարձրաձայն ծափահարութիւններով ընդունեցին։ Զաուէրին փոխարինեց Լլոյդ—Ջորջ, որի առաջարկութեամբ ժողովը ընդունեց հետեւեալ վճիռը. «Ժողովը Լօնդոնի քաղաքացիների անունից դատապարտում է հարաւ-ափրիկեան պատերազմը եւ պահանջում է, որ երկու հանրապետութիւնների քաղաքացիներին առաջարկվեն հաշտութեան այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն նրանց կատարեալ անկախութիւնը»։ Ապա Դիլլոնի առաջարկութեամբ ընդունվեց մի ուրիշ վճիռ, որով ժողովը իր զայրոյթն է յայտնում կառավարութեան, որ հարկադրում է անգլիական զինուորներին հրդեհել ագարակները եւ գերի վերցնել կանանց ու երեխաներին։

—«Новости»-ին հեռագրում են Բերլինից. «Վիլհէլմ կայսրը չոգենաւային դիրեկտոր Բալլինի հետ խօսելիս ակնարկեց, թէ ինքը ուզում է նրան մինիստր նշանակել։ Բալլին առաջ բերեց իր հրէութիւնը։ Կայսրը առարկեց. «Կարող էք փոխել ձեր հաւատը»։ Բալլին պատասխանեց. «Ոչ, ես նուիրված եմ իմ հայրերի կրօնին»։ Կայսրը նկատեց. «Այնուամենայնիւ, մի կերպ կը համակերպվենք»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

14 յունիսի

ՎԻԵՆՆԱ։ Կոմս Հոհէնվարտ, ընդհանուր հիւպատոսը Տանջէրում, նշանակված է դեսպան Մէքսիկայում։ Դեսպանութեան խորհրդական կոմս Կէնտէվել Պուտտէ՝ ընդհանուր հիւպատոս է նշանակված Տանժէրում լիազօր մինիստրի կոչումով եւ դիրքով։

ՊԱՐԻԶ։ Կոմս Լիւր-Սալիւս ճանապարհ ընկաւ Բրիւսսէլ։—Ավտոմոբիլների ընթացքը Պարիզի եւ Բերլինի միջեւ սկսվեց առաւօտեան 3½ ժամին Շամպինի ամրութիւնից, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Իտալական կառավարութիւնը հաղորդեց ամէրիկականին, որ Իտալիան ոչինչ արտահանական պրէմիաներ չէ տալիս շաքարի համար։

ՄԱԴՐԻԴ։ Օպօրտօում ժանտախտ երեւաց։ ժանտախտով հիւանդացան 12 մարդ եւ 4 հոգի մեռան։

ԼՕՆԴՕՆ։ Միացեալ կլուբի տարեկան բանկէտում Սալսբիւրի, նախագահելով, ճառի մէջ ասաց. «Ունիոնիստները խլեցին ոյժը դիմադրական կուսակցութիւնից եւ խախտեցին սահմանադրութեան գործողութիւնների հաւասարակշռութիւնը, որը աշխատում է այժմ ոչ սովորական կանոնաւորութեամբ»։ Նա, Սալսբիւրի, դժգոհ է իրերի այժմեան դրութեամբ եւ կը գերադասէր աւանդական կարգը։—«Standard»-ին հաղորդում են Շանգհայից, որ լուրերին նայելով, պրինց Տուան մօնգոլական մի քանի հազար ձիաւորներով Պէկին գնալու համար անցաւ Խէնջէնի վրայով, 90 մղոն Նինսեաֆուից։ Տունֆուսիանը հանգիստ նստած է Կուէնչժուում, դիտաւորութիւն չունենալով միանալ Տուանի հետ կամ գնալ Տաուէնֆու։

ԼՕՆԴՕՆ։ Բիչմոնդից, Կապի գաղթականութեան մէջ, հաղորդում են, որ բօէրների մեծ ոյժ Մալանի եւ Սմիտի առաջնորդութեամբ, յունիսի 13-ի լուսաբացին յարձակվեց Բիչմոնդի վրա. յարձակումը տեւեց մինչեւ երեկոյ։ Բօէրները յետ քաշվեցին, լսելով Էնտսի ոյժերի մօտենալու մասին, որը հասաւ յունիսի 14-ին, առաւօտեան։

ԼԷՅՊՑԻԳ։ Վճռված է կօնկուրս նշանակել Լէյպցիգի բանկի վրա. մօտաւորապէս հաշուած է, որ բանկը 92 միլիօն վճարելիքներ ունի, իսկ 159½ միլիօն ակտիվ։

ՕԴԷՍԱ։ Երէկ տիբէթեան արտակարգ դեսպանութիւնը պատեց տեսնելու քաղաքի արժանայիշատակ տեղերը, լաւագոյն շինութիւնները եւ մուզէյը։ Դեսպանութեան գլուխը, ստորագրելով պատուաւոր այցելուների գրքում, խոստացաւ, Տիբէթ վերադառնալուց յետոյ, ուղարկել թանգարանի եւ քաղաքային գրադարանի համար զանազան առարկաներ եւ գրքեր։ Երեկոյեան դեսպանութիւնն այցելեց Մալի Ֆոնտանը, որը գեղեցիկ կերպով զարդարված էր դրօշակներով եւ ծաղիկներով. ծովափում նրան թէյ առաջարկվեց։ Այսօր դեսպանութիւնը կերթայ տեսնելու ջրանցքային կայարանը, ուր քաղաքը նրա համար նախաճաշ է պատրաստում։ Դեսպանութիւնը շատ գոհ է սիրալիր ընդունելութեան համար Օդէսայում։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Մարդատար գնացքը Հէլսինգֆորսից ցերեկվայ 3½ ժամին ընդհարվեց Կօրպի եւ Օտալամգիի միջեւ ապրանքատար գնացքին Գանգէից. վնասվեցին չոգեմեքենան, ապրանքային եւ ծառայողների վագոնները, ջարդվեցին երկու ապրանքատար վագոններ, եւ վնասվեց երկրորդ կարգի վագոնի պատը։ Ճանապարհորդները միայն երկիւղ կրեցին. վիրաւորված են մեքենավարը եւ հնոցապանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր գերմանական զինուորական պատգամաւորութիւնը կոմս Մոլտկէ գեներալի հետ այցելեց Կրասնոє-Սելօում Պրէօբրաժէնսկի գունդը։

15 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պէկինի դեսպան Գիրսին

է լցվում այդ ջրից եւ ուղարկվում զանազան տեղեր։ Օրական դուրս է հոսում 240,000 վեդրո...

Այս ջուրը արդէն միլիօնաւոր շիշերով տարածվում է Ռուսաստանում եւ յոյս կայ, որ գնալով տարէց տարի աւելի ժողովրդականութիւն ստանայ եւ բռնէ արտասահմանի Ապոլլինարիուս ու Գիսգիբլեր ջրերի տեղը։ Եւ, յիրաւի, իր բաղադրութեամբ, Նարզանը աւելի հաճելի եւ աւելի զովացուցիչ խմելիք է, քան յիշած ջրերը. եւ ամեն իրաւունքով պիտի յետ մղէ նրանց, մանաւանդ որչափ աւելի էժան է։ Տարաբախտաբար, Նարզանի արտահանելու գործը շատ վատ էր կազմակերպված. այս տարվանից ջրերի վարչութիւնը սկսել է պահել ներկայացուցիչներ, որոնք պարտաւորվում են վերցնել 1901 թւին 2 միլիօն 800 հազար շիշ, 1902—3 միլիօն 850 հազ, եւ 1903-ին 5 միլիօն 450 հազար։ Այս ներկայացուցիչները պիտի տարածեն Նարզանը ամեն մէկը Ռուսիայի որոշ նահանգներում, եւ որոշ գնով։ Այսպէս Բագուի նահանգում շիշը կարժենայ ոչ աւելի քան 11 կոպ., Անդրկովկասում—12 կոպ. եւ այլն։

Նարզանը գործ է ածվում նոյնպէս եւ ինչպէս լոզարան։ Նարզանը իր ածխաթթուով գրգռիչ ազդեցութիւն ունի մաշկի վրա,—կարծես ասեղներով թեթեւ ծակծկում են կաշին։ Այս ձեւով վաննաները մեծ աջողութեամբ գործ են ածվում զանազան ներվային տկարութիւնների — ներվասթենիայի, ընդհանուր ուժասպառման եւ թուլութեան դէմ։

Կիսլովոդսկ իր լեռնային մեղմ կլիմայով, իր զովացուցիչ գազաչատ ջրով իսկական կուրորտ է թոյլ կազմուածք, թոյլ կուրծք ունեցողների համար, երբ հիւանդը յարատեւ թոքերի հիւանդութիւն ունի, երբ երկար տանջվել է դեղօրայքից. լաւ է սակաւարիւնների, թոքախտաւորի, մարսողական գործարանների, միզային գործարանների թուլութեան եւ անկանոնութիւնների տէր հիւանդների համար։

—

Եթէ մեր Կովկասի կուրորտները շատ յետ են մնացել արտասահմանեան բուժատեղերից իրանց բարեկարգութիւնով եւ յարմարութիւններով, գոնէ գերազանցում են նրանց բազմատեսակ ջրերի այս զարմանալի հաւաքումով եւ հէնց իրանց ջրերի յատկութիւններով։

Ինչպէս ասել ենք, ամեն տեսակ հիւանդութեան տէր մարդիկ կարող են իրանց ցաւին յարմար բժշկութիւն գտնել այստեղ։ Այն ինչ ռուս ազգաբնակութիւնը մինչեւ հիմի էլ անվստահ է դէպի այս գեղեցիկ կուրորտները եւ ամեն փոքր թէ շատ ունեւոր հիւանդ դիմում է արտասահմանի ջրերը։ Միլիոնները տարվում են այնտեղ, այն ինչ մեր ջրերի այցելողների թիւը շատ սահմանափակ է մնում։ Դրա պատճառը անտարակոյս հաղորդակցութիւնների դժուարութիւնն էր, կարգ ու կանոնի բացակայութիւնը, բուժական միջոցների (վաննաներ եւ այլն) պակասութիւնը։

Վերջին տարիները, բարեբաղդաբար, այս թերութիւնները կամաց-կամաց լրացվում են, երկաթուղին ամեն ժամ վազում է կուրորտների միջեւ, նոր-նոր չքեղ կառուցվածքներ են բուսնում, զբօսատեղիները կանոնաւորվում, ուղիներ, հանգստանալու համար նստարաններ, պանդոկներ շինվել են շրջապատող սարերի վրա, ամեն տեղ մտցնվում է ելեքտրական լուսաւորութիւն եւ այլն։

Կեանքը իրապէս թանդ է, բայց թանդ է այնպիսիների համար, որոնք անտեղեակ լինելով այնտեղի կարգերին, ընակվում են հիւրանոցներում եւ ճաշում են թանդ ճաշարաններում։ Այստեղի ամենամեծ ծախսը ընակարանն է, թէեւ դարձեալ կարելի է 15—20 ռուբլով սենեակներ ճարել։ Զարմանալի էժան են մթերքները, այնքան էժան, որ թիֆլիսեցիները ապշում են։ Այսպէս բղուղ (4—5 բաժակ) կաթը ու մածունը արժէ 8—10 կոպէկ, 100 ձուն—70—80 կոպէկ, ճուտը 12—15 կ. եւ այլն։

Ամեն գրուպներում էլ հայերը կազմում են մի շատ խոշոր տոկոս։ Սրանց մեծագոյն մասը Բագուից է. բագուեցիների համար Պետրովսկի գիծը բացվելուց յետոյ կովկասեան կուրորտը դառել է ամենասիրելի ամարանոցը, այնպէս որ շատերը գալիս են իբրեւ ամարանոց։ Բոլոր գրուպներում թուխ հայկական տիպերը աչքի են ընկնում, Ժելեզնովոդսկը կարծես հայ գիւղ լինի, այնքան բազմաթիւ են այնտեղ հայ ընտանիքները։ Առանձնապէս աչքի են ընկնում Կիսլովոդսկում ընակվող հայ տիկինները իրանց չքեղ հագուստով ու նիստ ու կացով։

Բագուցիներին են վերագրում ընակարանների այսչափ թանգութիւնը։ Եւ իրաւ, նրանք են, որ ահագին վարձ են տալիս եւ այդպիսով բարձրացնում գները։ Հաղուագիւտ բան չէ, որ բագուեցին 3—4 սենեակին 1000—1200 ր. վճարէ երկու երեք ամսվայ համար։

Հայ հիւանդները անհրաժեշտաբար պիտի քաշէին եւ հայ բժիշկներին։ Եւ, ճշմարիտ, վերջին տարիներս հայ բժիշկների թիւը տարէցտարի աւելանում է, թէեւ շատ դանդաղ կերպով։

Հանքային ջրերում բժշկութեամբ պարապող առաջին հայ բժիշկը եղել է Շիլթօվը, յետոյ եղել է բժ. Գալստեանը, Դանիէլբէգը, Բերբերեանը, Թոմասը եւ Բուդուղեանը։

Այժմ զանազան գրուպներում բժշկութիւն են անում հետեւեալ բժիշկները՝ Բերբերեան, Բուդուղեան, Գեանջումեան, Դանիէլբէգ, Զախարբէգեան, Թադէոսեան, Կարտկեան, Մուրադեան, Սուրէնեան, Շահինեան, Տէր-Միքայէլեան, Քալանթարեան, Քամոյեան, Արծրունի, ընդամենը 14 հոգի, որ կազմում է բոլոր բժիշկների 5%-ը։ Սակայն պէտք է նկատել, որ նրանց մէջ կան այնպիսիներ, որոնք շատ յայտնի են եւ մեծ պրակտիկա ունեն։

Մի ուրիշ անգամ կը խօսեմ այստեղի հայ գաղութի մասին։

Բժշկ. Վ. Արծրունի

հրամայված է լինել դեսպան Բաւարիայի թագաւորութեան մէջ։

Նշանակվում են՝ Օրլովի նահանգապետ Տրուբնիկով կայսրուհի Մարիայի հիմնարկութիւնների խնամակալական խորհրդի պատուաւոր խնամակալ, հաղորդակցութեան ճանապարհների կովկասեան շրջանի գլխաւոր Ֆլորին—Եալտայի նաւահանգիստը կարգի բերելու աշխատանքների կառավարիչ. ջրային եւ խճուղային հաղորդակցութիւնների եւ առեւտրական նաւահանգիստների վարչութեան ջրային հաղորդակցութիւնների, խճուղիների եւ նաւահանգիստների տեսուչ Գունէվիչ—հաղորդակցութեան ճանապարհների կովկասեան շրջանի գլխաւորի պաշտօնակատար. Բաւարիայի ռուսական դեսպան բարօն Ռոզէն նշանակվում է Աթէնքի դեսպան։

Բիւլըտէն յունիսի 13-ից. «Մեծ Իշխանուհի Մարիա Գեօրգիեվնայի առողջական դրութիւնը, նոյնպէս եւ Նորածնի, ամէն կողմից գոհացուցիչ է»։

Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէոդորովնայի առողջութեան մասին բիւլըտէնները դադարեցրված են։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Բացված է պարլամենտական արտակարգ նստաշրջան։ Արքայական հրովարտակի մէջ մատնացոյց են արված մի քանի հարցեր, որոնք վերաբերում են հասարակական դաստիարակութեան օրէնքին եւ յանցաւորներին յանձնելու վերաբերմամբ Աւստրո-Ունգարիայի հետ կապվելիք դաշնագրի հաստատութեանը։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Բօրայում տեղեկութիւններ են ստացված, որ Ցարիցինում ահագին հրդեհ է. այրվում են փայտեղէնով լցված նաւեր, փայտէ նաւահանգիստներ, փայտասղոցարաններ եւ քաղաքային ծայրերը. վնասը մէկ միլիոնից աւել է. ենթադրվում է հրձիգութիւն։

ՕԴԷՍԱ։ Այսօր տիբէթեան դեսպանութիւնը գնաց նայելու քաղաքային հիմնարկութիւնները եւ ներկայ էր ինտելիգէնտ հոգեկան հիւանդների համար օրինակելի տան օծման արիթով եղած ժողովին։ Դեսպանութիւնը վաղը ճանապարհ է ընկնում Պետերբուրգ։

ՄՕՍԿՎԱ։ Երեք անյայտ չարագործներ կազանեան ճանապարհի կայարաններից մէկի մօտ թռան անցնող ապրանքատար գնացքի մէջ եւ սկսեցին պլոմբերը պոկել կողոպտելու նպատակով։ Գնացքի ծառաները կանգնեցրին գնացքը եւ ուզեցին բռնել յանցաւորներին, բայց նրանք սկսեցին բէվոլվէրներից արձակել։ Մարդիկ անմնաս մնացին, կողոպտողները փախան։

ԽԱՐԿՕՎ։ Առեւտրական բանկը իրան մնանկ հրատարակեց, խնդիրք տալով նահանգական դատարանին։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Ռուսաց դեսպան կոմս Կասսինի, որը այսօր ճանապարհ ընկաւ Եւրոպա, յայտնեց «Commercial Advertiser»-ի ներկայացուցչին, որ սակագնային հարցերին վերաբերող թիւրիմացութիւնները ծագում են ամէրիկացիներից։ Կոմս Կասինի աւելացրեց, որ եթէ բանը հասնէր մաքսային պատերազմին երկու պետութիւնների միջեւ, դրանից կը վնասվէին Միացեալ-Նահանգները, եւ ոչ թէ Ռուսաստանը. «Commercial Advertiser»-ի թղթակիցը աւելացնում է, որ կոմս Կասինի, որպէս դիպլոմատ, չարունակում է լաւատես նայել գործին։ Նիւ-Եօրկում բոլորը այն կարծիքի են, որ գանձարանի քարտուղար Գէջ գցեց Միացեալ-Նահանգները անօգուտ եւ թանգ արժեցող վէճի մէջ, որի մէջ Ամէրիկան, ինչպէս ասում է կոմս Կասինի, կարող է բոլորը կորցնել, ոչինչ չշահելով։

Կ. ՊՕԼԻՍ։ Սաստիկ եւ երկարատեւ կարկուտը ոչնչացրեց հունձի մեծ մասը եւրոպական Թիւրքիայում։ Զմիւռնիայի վիլայէթում նոյնպէս հունձի մեծ մասը, մանաւանդ վազերը սաստիկ վնասվեցին։ Անատոլիական վիլայէթներում, ուր հունձը փառաւոր հեռեւանքներ էր խոստանում, կարկուտը պատճառեց ոչ այդպիսի նշանաւոր, բայց, յամենայն դէպս, էական վնասներ։

ԲԷՑՐՈՒԹ։ Հաղորդում են, որ թիւրքաց բարձրաստիճան պաշտօնեաների վերաբերմամբ Դամասկոսում, որոնք պատկանում են Կ. Պոլսի նշանաւոր ընտանիքներին, մատնութեամբ, հրամաններ են արձակված կալանաւորելու. նրանցից մէկը կալանաւորվեց Դամասկոսում, երկու ուրիշները ազատվեցին ռուսական հիւպատոսարանում։ Ռուսաց ընդհանուր հիւպատոսը բացակայ էր, բայց վերադառնալուց յետոյ յայտնեց վալիին, որ կը յանձնէ երկու պաշտօնեաներին էլ, հէնց որ հրաման կը ստանայ այդ բանի մասին Կ. Պոլսի դեսպանութիւնից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԶԿ. ՎԱՀԱՆ ՍՐԹԱՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ-Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամէն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։ 4—10

Լոյս տեսաւ
Ա. Լալայեանի
ԱԼԲՕՄ

Կարս քաղաքի եւ նրա շրջանի տեսարանների (Կարս, Սարիղամիշ, Արդահան, Խնծկոնք, Մաղասու բերդ, Անի, Բագնայր, Հոռոմոս, Զրվոլ. ընդամենը 32 նկար)։

Գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախսով։ Դիմել՝ А. Лалаянцу. Карсъ.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր են երկու ուսուցիչ, մէկը, որ աւանդելու է դպրոցական դասարաններում բնական պատմութեան 8, բնագիտութեան 7 դաս, իսկ պատրաստականներում թուաբանութեան 11 դաս 1320 ր. ռոճկով, լինելու է համալսարանաւարտ բնագէտ կամ մաթեմատիկոս. միւսը, որ աւանդելու է պատրաստականներում ռուսաց լեզուի 18 դաս, պէտք է լինի ուսուցչական ճեմարանը (учительскій институтъ) աւարտած կամ պատշաճաւոր վկայական ունեցող իրաւատէր ուսուցիչ։ Ցանկացողները թող դիմեն въ Нахичевань на-Дону, Ректору Семинаріи, Г. Чарихьяну.

Տեսուչ դպրանոցի պետական խորհրդական
Գ. Զարիխեան
(չ. չ.) 3—6

Մ. ՄՈՒՐՏԱԳ

Ամառը մնալով Թիֆլիսում, տալիս է անգլիական լեզուի դասեր, ամառվայ ընթացքում աւելի էժան. երաշխաւորում է արտասանութեան կանոնաւորութիւնը։ Նշանաւոր զիջումն կանէ այն դէպքում, երբ մի քանի աշակերտներ միասին կը պարապեն իր բնակարանում։ Տեսնել ժամը 4-ին։ Մադատովկայա։ 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՏԻՖԼԻՍԻՆ
ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։ 26—100

Удостоен. награды національной Академіи Земледѣлія, Промышленности и Торговли въ Парижѣ,
ПИСЬМЕННОЕ ПРЕПОДАВАНІЕ ДВОЙНОЙ
БУХГАЛТЕРІИ
вполнѣ замѣняющее устное преподаваніе. Условія и пробныя письма высылаю безплатно.
Плата умѣренная. Преподаватель бухгалтеріи
А. Н. ЯНКОВСКІЙ, въ Ригѣ.

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ամսիս 16-ին մեկնեց կովկասեան հանքային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս, կընդունէ հիւանդներին։

Հասցէն՝ Пятигорскъ, Верхній бульваръ, д. Карповой. 15—15

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.

եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 20 յունիսի (3 յուլիսի) շոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, նաւապետ ԲՈՒԼ։ եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տովորական գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խոջափարուիովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 16—20

!!! ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇՔ !!!
Ս. Մ. ԱՆԱՆՈՎԻ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ԳԻԼԶԱՆԵՐ

Շինվում են ֆրանսիական ամենալաւ «լը Դէրնիէր Կարտուշ» թղթից

Ս. Մ. Անանովի՝ Մոսկվայի գիլզաները բարակ են, գեղեցիկ, մոխիր չեն թողնում եւ ոչնչացնում են նիկոտինի ներգործութիւնը։

Պահանջեցէք ամէն տեղ Ս. Մ. Անանովի Մոսկվայի գիլզաները։

Գործարանը—ՄՈՍԿՎԱՅՈՒՄ, բաժանմունքը—ՐՈՍՏՈՎՈՒՄ ԴՈՆԻ ՎՐԱ. 6—8

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ ԱՄԱՌԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԲՕՐԺՕՄ ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Թէ Բօրժօմում եւ թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմէրների, ռէալական, առեւտրական եւ այլ ուսումնարանների համար։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումն աւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ։ Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն։

Նոյն տեղը ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ։ Օտարաքաղաքացիների համար կան ամենայն յարմարութիւններ։

Հասցէն. БОРЖОМЪ. Гротовская ул. ПАНСІОНЪ ТЕРЪ-АКОПОВА. ТИФЛИСЪ, Гановская ул. № 11. 6—10

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամէն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։

Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-չաքար (պաղ-չաքար, леденецъ),

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։

Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլխանեանի, Զ. Գ. Պապովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռահմանովի պարկական մագազինում, Պետրի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։ 38—100

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Іюня 1901 г.

Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.